

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Միայն թէ բաղձն դու հայ մնալու
Օրէնք, սատ, պատրանք ունայն կը լինին
Լեզու, կրօն ու ծէս քեզմէն բառնալու
Միւսիւման դառնալ դժուար է հային:

Ռափայէլ Պատկանեանը, որ բազմաթիւ կեղծ ա-
նուններով էլ յայտնի է մեր գրականութեան մէջ,
փոքր ազգի մեծ բանաստեղծն է բառիս բուն նշանա-
կութեամբ: Մեր ուրիշ բանաստեղծների և վիպասան-
ների նշանակութիւնը նսեմացնելու համար չէ, որ մենք
Պատկանեանին, որը Գամառ-Քաթիպա, Սիւլլիւկ, Ախ-
տամերկեան և այլ անուններով շատ գրուածներ ունի,
ճանաչում ենք իբրեւ առաջին նշանաւոր բանաստեղծ:
Դժուար է ասել, թէ Ռ. Պատկանեանը իբրեւ բանաստեղծ
քնարերգու է, բարձր թէ իբրեւ երգիծաբան, սատիրիկ-
գրող: Բազմակողմանի է և զօրեղ Պատկանեանի տա-
ղանդը, թէեւ երախտամոռ հայ ինտէլիգենցիտն և հայ
մամուլը մինչև այսօր ոչ միայն մի լուրջ ուսումնասի-
րութիւն չէ նուիրել մեծ հայ բանաստեղծին, այլ և
նոյն իսկ նրա երկերի հրատարակիչները չեն նուիրել մի
քանի երես Պատկանեանի բանաստեղծութեան նշանա-
կութեանը: Ոչ մի գրուածք չկայ, որ նրա գրական գոր-
ծունէութիւնը կապէր նրա կենսագրութեան հետ, որ

պարզէր նրա տաղանդի աստիճանաբար զարգացումը կամ գէթ դասաւորէր բանաստեղծի երկերը ժամանակագրական կարգով: Առհասարակ գրական արժէք ունեցող հայերէն լեզուով համարեա ոչինչ չունինք Պատկանեանի մասին, որի ներքին կեանքը և ստեղծագործութեան գլխաւոր մօմէնտները մեզ համար տակաւին անյայտ են: Սակայն Գամառ-Բաթիպայի և Սիւլլիւկի նշանակութիւնը այնքան մեծ է մեր գրականութեան մէջ, որ նա ամենայն իրաւամբ արժանի է ամենալուրջ ուսումնասիրութեան:

Բայց միթէ միայն Պատկանեանն է, որ մնացել է մեր կողմից առանց արժանաւոր գնահատութեան և միթէ կենդանի բանաստեղծները և մայրենի գրականութեան ու լեզուի մշակները, ազգային ինքնագիտակցութեան աշխատաւորները աւելի էական ուշադրութեան են արժանացել ազգային գործերի ղեկավարների կողմից: Բնաւ ոչ, Այս մի այնպիսի ցաւալի երևոյթ է, որ իրօք արժէ մտածել այս մասին:

Մարդիկ մտածում են և խօսում ազգային լռաջադիմութեան, ազգային ինքնագիտակցութեան զարգացման մասին և անտես են առնում հէնց այն ֆակտորները, որ ամեն մի ազգի պատմութեան մէջ գլխաւոր դեր են ունեցել ու ունին ժողովրդի քաղաքակրթութեան գործում: Մայրենի լեզուն և գրականութիւնը ոչ պակաս նշանակութիւն ունեցող պայմաններ են ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման համար քան միւս բոլոր գործօնները և այս պատճառով արժէ, որ հասարակական խնդիրներով և հասարակական փողերով զբաղուող մարդիկ մի փոքր շուտ ուշքի գան և պատշաճաւոր ուշադրութիւն շնորհեն մայրենի լեզուի և գրականութեան զարգացման:

Մինչև այսօր էլ դեռ բարելիշատակ Արուսեանի արտաշարժ կոչը մայրենի լեզուի մասին մնում է ձայն

բարբառոյ յանապատի: Սակայն դառնանք Պատկանեանի երկերին:

Քանի որ չունինք հեղինակի մի փոքր բովանդակալից կենսագրութիւն և պատրաստական նիւթեր՝ պէտք մի փոքր սպասել առաջին հայ բանաստեղծ-քննադատի գործերի մասին մանրամասնօրէն գրելու: Ինչ խօսք, որ Պատկանեանի նշանաւոր գործերը և երկերը մտել են նրա աշխատութիւնների նախկին երկու հատորի մէջ: Երրորդ հատորի մէջ տեղ են գտել այն բոլոր երկերը և գրութիւնները, որոնք հեղինակի կենդանութեան ժամանակ զանազան պատճառներով մնացել էին անտիպ և մի քանի՝ Նախիջևանի բարբառով գրութիւններ, որոնք լոյս էին տեսել մեր պարբերական թերթերում: Այս հատորի մէջ տեղ գտած թէ ոտանաւորները և թէ տեղական բարբառով գրութիւն երկերը կրում են Պատկանեանին յատկանշող գծերը: Առհասարակ մեր հեղինակի չափաւոր երկերը կամ հայրենասիրական են կամ երգիծական: Երբեմն երբեմն հանգուցեալ բանաստեղծը գրում էր և մանկական երգեր: Պատահում են և խրատական բնավորութիւն ունեցող ոտանաւորներ: Այս հատորի մէջ հայրենասիրական են «Գոլոսանը Կողքիսում», «Հանգանակ Հայութեան», «Ծաղկաձոր», որոնց մէջ բանաստեղծը լոյս է արծարծում հայի ապագայի համար:

Հալը ճկուն է, բայց չէ դիւրաբեկ
Ուռուցիկ հոգմը կը կտարէ կաղնին,
Կանգուն, անվնաս կը մնայ եղէգ—
Յաւիտեան այս էր վիճակը հային:

Երգիծական երգերը միշտ անպակաս են եղել Պատկանեանի գրութիւններում: Նրա Նախիջևանի լեզուով գրութիւն արձակ պատմութիւնները ըստ մեծի մասին մտրակում են հայի տրտմանը և այս տեսակի երկերը կազմում են բանաստեղծի պսակի ամենաբուրբալէտ ծա-

ղիկները: Ոտանաւորների մէջ էլ պատահում են ալնալիսի երգեր, ուր հեղինակը դառն ծաղրի է ենթարկում այս կամ այն հասարակական տգեղ երեւոյթները կամ այս կամ այն տիպի մարդկանց: Այս տեսակի ոտանաւորներից արժանի են ուշադրութեան «Համեստութիւն», «Կօլօվա», «Ջէնկինը ու Աղա», «Կտակ», «Փիսիկ-փիսիկ կատուի պէս» և այլն: Վերջին երգի մէջ բանաստեղծը նկարում է մի ճիզուկտի տիպ, որ իւր խաբեբայ ձևերով և արտաքինով ծածկում է իւր կեղծաւորութիւնը և աւազակութիւնները և մինչև անգամ հասարակութեան պատուաւոր անդամ էլ է համարւում: Այս տիպը ալնքան կենդանի է և միևնոյն ժամանակ մեր կեանքում տարածուած, որ սպասում է աւելի մանրամասն նկարագրողի և արժանի է խոր ուսումնասիրութեան:

Փիսիկ փիսիկ կատուի պէս

Քալվածքս է նազերով.

Փիսիկ փիսիկ կլասնի էղա,

Իրիցփոխան, սթառչինա.

Իւմէտով իմ էկած թռէթին

Ինձի կանին կօլօվա:

Ինչպէս չասին ինձպէս մարդուն

Հէմ էվալլա, հէմ պուվա:

«Կօլօվա» սատիրայի մէջ աւելի գեղեցիկ կերպով է նկարագրուած մեր բոլոր քաղաքներում քաղաքագլխի պաշտօնի ձգտող անձանց տիրապետող տիպը: Այս երգի հերոսն ասում է, որ նա շատ չաւ գիտէ իւր համաքաղաքացիների բնութիւնը, ուստի և բոլորին խոսմունքներ կտայ, բայց չկատարելու հնարն էլ գիտէ. որ պաշտօնները կբաժանէ աղաների ազգականներին, մեծամեծ ծրագիրներ է խոստանում կատարելու և այլն և այլն: Ահա և իսկական երգի գեղեցիկ կտորները—

Մէկ օր ընտռէ ինձի նախընտրան
Յունեպին հախով իրեն կօլօվան,

Խեղքերէտ անցած չէ, տուք ով Հայեր,
Ենզ ինչ քրջանիկ պիտ ցուցնում օրեր:

Չունքի ծեր քնութքը ես տեղով գիտիմ,
Ամենքիդ խօսքին անկաճ պիտ տընիմ,
Այ կատարելու ժամանակը գայ—
Աթքադի համար մահանայ շատ կայ:

Քաղաքիս մէջը սոյ-սօյի շատ ունիմ,
Նոցա ամենուն օտքի պիտ տընիմ,
Փռխիաժնոյ, կյանի, տախտի տեղեր
Կըլան ու կանոնն աղայի սոյեր:

Որ մարդիք վըրաս պերան չի պանան,
Այային մէկ մէկ մալտաքի կուտամ,
Իպրոց, պահչա, քուպ և ուրիշ շատ պան
Պերնով թօ խորդին՝ ինչքան ուղենան:

Քովըս թօյի կանիմ պամուլիսներ,
Սուպուրուց տէրտէր ու ապլաքաթներ,
Նազա ծեղրովը էքքէս կը հանիմ,
Ինքս ալ հնովանդ սուս փուս կը նայիմ:

Վատէիս օրը ալ որ մօտիկնայ,
Մէջիս ֆէնտերը ուրիշ սոյ կըլայ,
Նորէն ամենուն կուտամ իւմէտներ,
Խորդելու կըլամ շատ վարժատուններ:

Մեր տեղէն Ռաստով երկըթէ ճամպայ,
Փիթուն քաղաքը քարվածք պիտ լայ,
Էրկու-իրեք տեղ պախճա պիտ անիմ,
Հալսին պուռունկին մածուն կը քսիմ...

Վըրաս պան ասել մարդ խափի ըլայ,
Համան կը պերեմ ես կուլիու վըրայ,
Տանօս, պամպասանք, խարփուդի կըճէպ—
Ասպէս թանցերու ես շատ եմ վարպետ:

Գալով գրքի երկրորդ բաժնին, պէտք է ասենք,
որ ի բաց առած մի երկու հատ մեհախօսութիւններ
և գրական լեզուով գիտնական Էմինի մասին լիշողութիւններն ու երկու մանր յօդուածները՝ մնացածները
Նախիջևանի բարձառով գրուած սատիրաներ են:

Բազմակողմանի են այս պատկերներէի նիւթը: Այս
պատկերներէ մէջ մեծ բունաստեղծը կատարեալ արուեստաբէտի վրձինին յատուկ տաղանդով նկարագրում է և

ծաղրում շրջապատող կեանքի միջին երևույթները և հակահասարակական տիպերը։ Վաճառականն ու վարժապետը, քահանան ու վարդապետը, քաղաքագլուխն ու գործակատարը, սալլապանն ու հարուստը—բոլորը կենդանի մարդկանց կերպարանքով և որ գլխաւորն է տիպական բնորոշ յատկանիշներով են գծազրուած այս երկերի մէջ։ Խոր հագեցանական անալիզով վերլուծելով իւր հերոսների ներքին աշխարհը՝ բանաստեղծը շարժում է ընթերցողի խղճի լարերը և զարթեցնում է ինքնազիտակցութիւն, իսկ իրական կեանքի ալլանդակութիւնների պատկերացումով հասարակական խիղճն ու գիտակցութիւնն է արթնացնում։ Այս պատկերներինց ամենազեղեցիկներն են «Վարժապետ», «Հոգաբարձու», «Փոռսուխին Աւագը», «Էսլի Լէվէնտ», «վարժէվոր», «Պողաճի Գալուստ», «Հինուկներ», և «Մոնթէն մինչև վեր» երկերը։ Տգէտ վարժապետի տիպարը այնքան կենդանի և սրամիտ գծերով է պատկերացրել Պատկանեանը, որ կարծես դեռ երեկ մենք տեսած լինենք մեր նախկին դպրոցներում պատահած հին ուսուցիչների տիպին։ Ահա այդ հին ուսուցիչների շարադրութեանց նմուշը, որ մեր բանաստեղծը ծաղրում է.—

«Զժամանակ, զթաքավոր, զբաղմամեղ,
«Զքօխքօթա, զփիլիսոս և զառաքեալ,
«Զավետարան, զաստվածաշունչ և զնարեկ,
«Զհօրթանան, զմկրտեալ և զօվանէս...

«Եւ ետես զաստված, զի բընացեալ է,
«Զքեոթին և զօտին համփութեալ է,
«Զմախթան վերին նա ասացեալ է,
«Զհեթնոց, զվերչնոց նա կօրծանեալ է,
«Համփառնամ քառին վասն մեր մեղաց,
«Օծութեամբ քիստօսի և հոյժ տանջանաց,
«Մեղա՛ էրօրթութեանըթ առաջի սեղանին
«Փաղմամեղ մարթոյս զամսամ վօրմին...

«Մոնթից մինչև վէր» պատմուածքի մէջ բանաստեղծը նկարագրում է մի ստահակ երիտասարդ, որ ոչ

մի բանի պէտքական չլինելու պատճառով վերջը քահանայ է դառնում և ապա կնոջ մահից լետոյ վարդապետ: Ներփակեալ երեք հարիւր բուբլին ստանալուց լետոյ ահա սրբազան եպիսկոպոսը ինչպիսի քննութիւն է կատարում Մինաս սարկաւազին.

— Բանի՞ Աստուած կայ:

— Երեք Աստուած կայ՝ Հայր, Որդի և Հոգի սուրբ, և մի հաս էլ Աստուածածին:

— Հայոց եկեղեցին բանի՞ խորհուրդ է ընդունում:

— Եկեղեցիի բանի խորհուրդ ընդունածը չ'զիտեմ, բայց եկեղեցւոյ խորհուրդները դրանք են՝ երեխայ մկրտել, տղոցկանի տունը փարատել, պսակ՝ կատարել, մեռել թաղել, տարին երկու անգամ անօրհնէք բալել, ժողովրդին տօնի օրը շնորհաւորել, գերեզման օրհնել, թաթաւ (անձրեւ) չեկած տարին՝ չոք կատարել. մէկ խօսքով այն ծէսերը, որոնց համար ժողովուրդը շահում է իւր ծխատէրին: Հա, մոռացայ ասելու՝ ատեն-ատեն այ հիւանդին վրայ նարեկ կամ աւետարան կարդալ:

— Հայոց եկեղեցին ո՞ր սուրբ նահատակներին է տօնում:

— Հայի սուրբ նահատակները դրանք են՝ սուրբ Գրիգոր Լըսաւորիչ, սուրբ Թորոս, սուրբ Գէորգ, սուրբ Գալուստ, սուրբ Համբարձում, սուրբ Խաչ, սուրբ հրեշտակապետ, սուրբ Յարութիւն, սուրբ Մկրտիչ, սուրբ Կարապետ, սուրբ խոր վիրապ: Ան մէկալ սուրբերը՝ Արամ, Աբշակ, Գաղիկ, Աշոտ, Սմբատ, Տիգրան, Սենեքերիմ—ան պօշ սուրբեր են, նրանց ոչ Տէր-Աթրահամեանի օրացոյցը կընդունէ և ոչ քահանաները տօնշնորհաւոր կըալեն:

Հատ ժամանակ չանցած՝ բոլոր քաղաքի մէջ անպիտան, անընդունակ, վնասակար, սրիկայ ճանաչած երիտասարդը դարձաւ հայոց քահանայ, Բրիստոսի բանաւոր հօտի հովիւր և Աստուածորդու տեսանելի պատկերը նրա հետեողաց աչքում ի փառս սուրբ Էջմիածնի և ի մխիթարութիւն հայ ժողովրդին:

«Լարթէվօր» գեղեցիկ և խոր միտք ունեցող երգիծաբանութեան մէջ հեղինակը մի կողմից ծաղրում է հնութիւնը փառաբանող հերոսին և միւս կողմից էլ երևան է հանում հին սովորութիւնների շնորհիւ կատարուած սովորական խաբեբայութիւնները և կեղծաւոր բարբերը: Սա այնքան սիրուն պատկեր է, որ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին գրուածքի առաջին մասի հետ:

Ես ան մարթոգմէն չիմ, որ, չունքի ինքս պառվիլ իմ, հինգիլ իմ նը, հին մարթիք, հին ատէթ ու հին զանգաններ կօլիմ ու ամէն նոր մարթու վրայ մէմէկ փութ կուտնում. չէ՛, ես առպէսներէն չիմ. աղէկին աղէկ կասիմ, կուզէ հին ըլա, կուզէ նոր, ամպէս ալ՝ բէշին բէշ կասիմ, կուզէ պապերուս ատէնվայ պան ըլա:

Մեր նախուկանը տաճա քանի տարվայ քաղաք է վօր, թահմինովս հարուր տարի տաճա անցած չեպիտի լա նարաթ թէմէլ ցըրած օրէն. (մէմը խելքըս վրաս, աղէկ մը համպրիմ նը՝ տեղով կիմանամ-ալ. թի՛-ֆ թի՛ ֆ, հետս թէզպէհս առած չիմ. չէնէ անօր հէսապը կուտնելը խիտ խօյայ էր. ինչ ալ լա-նը): Նախուկանը՝ հայի քաղաքներուս մէջ էնկ նորն է. Թիֆլիս, Աթաթեթան—ան շատ հին քաղաքներ ին. նացա թօր-թօղ թաքաւորներուն անունը, պէքիմ, կորցըված մոռցըված ալ է. չունքի նացա թէմէլ ցըքօղները, սէօպտէ, եա Հայկին, եա Տրթատին օրթիքն ին. Հայկ ու Տրթատին մեռնելը, հէջօ-մասա, հինկհարուր տարի կըլա, պէքիմ աւելի եալ. նացա եթ-րեզմանին քարերը չօխտան փրթիլ են, եօխ էղիլ ին: Ան-տէնները կիր ռախամ լալը պէթէր իշկիլի է: Շինտի քիսիբի, առանց կիրի, առանց ռախամի իտիվօր հէսապը ինչպէս կու-կուտնուն մարթիք. մեղքիտ տէրը լամ, որ իտա շընտիվա՝ հին ատէնվա վրայ պատմութիւն կըրօղները ալայը փորերէն ղյտուրմիշ չանին նը,—ինծի հարցունուս նը՝ նացա չըզմըլածը ալայը սուտ է, ալայը ուլտուրմաճա պաներ ին:

Ամմա՝ առպէս չիկիտնաւ ասվածաշունչ-աւետարանը. ան՝ տեղով տեղով կըրած պաներ ին. կիրքի մէջ ալ կըրած է որ մէկ օր Ասված նստիլ էր պուռլէկէնին մէշալըխին մէջը, պուռ-լէկէնին մէշալըխն ալ կէրվէր կէրվէր՝ չէր վճարիլ. Ասված ա-սաց Վօսէս Վօսէս՝ ասաց: Վօսէսն ալ ասաց չհրամէ՛ Տէր իմ: Ասված ասաց. «կնա՛, իմ պատմութիւնս պատմէ՛ իմ ժողովուր-թին»: Վօսէս ասաց «ինչպէս պատմեմ օր՝ լիզուս թլվատ է», ասաց: Ասված ալ ասաց «լիզուտ թլվատ թօ լա տա, մինը անօր եօռուիլը չի՛նք կուտնուլ-ինչ ասաց, պերանտ մէմը պաճ. նայ-իմ: Վօսէսը պերանը պացից. Ասված ալ նարա պերանը իրեն սունչը փըլից՝ խըղղն էրած բէօմիւրի նմանակ:

Սունչ որ կասին նը՝ քիրոց խօսք է, որ նէֆէս ասէլ է: Է՛յ շաէ, ինչ ալ լանը, Եփոր Վօսէսին փորը Աստու-նէֆէսով իլինքցալ նը՝ Վօսէսն ալ ֆսեռալիւ իմաստուն կիտունի պէս մէկ պան էգաւ (սիֆթէ նա պալըխճի, ծուկ պոնոդ էր), անցածն ու քալիքը մէկ մինութիւն մէջ սօրվեցալ. առալ, ճանըս, էր-կուտա քարէ տախտակ ու անոնց վրայ պաշլալից կրելու, աշ-խրքիս էրեսը ինչ կայ, ինչ չի կայ՝ ալայը կրից, Տրթատն ալ հոն է, Բիրքով Լըսափօրչին տասվերկու չարչարանքն ալ հոն է, Պիղատոսին մատնութիւնն ալ հոնէ, Տէրն մէր Յիսուսին Բրիս-տոսին տանճանքն ալ հոն է, առաքելոցներուն հրեղէն լեզվով

քարոզութիւննալ հոն է, կարճ էվէլթի հինութ ալայ. պատմութիւնը հոն է, առ Մօսէսին տախտակներուն վերան կրթած: Մօսէսն ալ, ճանրս, ինքը ճուհուտ էր ամա՛ չունքի ան ատեններ, մատտէ հայերուս, ուրուշ մէկ ասք կիր-կարթում չունէր նը—նոյպի պէս մէկ պան էին—առաւ ու, սէօղտէ, առ ամէն պատմութիւնները հայի խօսքով կրրից, ամմա՛ ան ատենվա հայի լիւզիւն շընտրելա պէս խռմախառըշ, պուշաշըն չէր. ան ատենվանը բրախանակ, բիրոց կասվէր: Աննտիկի ծուկ-ուտող վարդապետները, սէօղտէ, կըտիլ ին առ տախտակները, մաքաղարթի վրայ սիւրիթը հանիլ ին ու ետքէն տըպիլ ին, տպելէն ետքն ալ ժամէ ժամ պաժնիլ ին: Հտէ—առ տպած քիւրքերն ին որ աւետարան, ամվածատունչ կասվին...

Ամմա, ես կիտիս քի թէկարան խորունկցայ, միթքս պան կար, կուզէն ասելու՝ մոռայ ու ուրուշ պան պաշլայեղի...

«Հին ու նոր» պատկերի մէջ բանաստեղծը դատա-
փետում է այն մարդկանց. որոնք մալրենի լեզուն սո-
վորելու կարիքը չեն գգում: Հետաքրքրական են այդ
տեսակ մարդկանց դատողութիւնները, որ հրաշալի կեր-
պով կենդանադրել է Պատկանեանը:

Մէկը կասէ—ասպէս ասողը քաղարիս մէջ հէ՛մ խօլօք
հէ՛մ ալ պան հասկըցօյ կիշվի—վաժատուն պանանք ամա՛ հայի
լուզու ու հայի հաւատ մէջը խօթել պէտ չէ, դէրէ հայի լու-
զուն, հայի հաւատը սայթը տէրտէրի, տիրացուի, վարդապետի
ու ժամկոցի պէտք է, կասէ. հայի լուզուլով մեր տղաքը խելը
չին սորվենալ, հապա մենակ փոխ ու շարական ասել կը կիտ-
նան: Հանա նայէ, քաղարիս մէջը մերամ տոխսան տարու հէ-
քիմ ունինք, որ տարին տարեկան էփպէյի ստակ կը վաստրկի
հայթէն. մէսը հարցուր՝ հայնակ կիտէ՛: Հանա պանքին մէջը
հինկ-վեց մարթ կայ՝ ո՛րը էրկու հազար, ո՛րը հալար, է՛նկ
վերջի մարթը ութը հարուր մանէթ հախ ունի. հայնակ կի-
տի՛ն: Հանա քաղարիս մէջը վեց-օխտը հատ ճուհուտ ու հոռօմ
տէլլալներ, լուզունները կախած փիթուն օրը աս ամպարէն ան
ամպարը կը վազին, ու ամեն մէկը տարին տասը-տասնըհինկ
հազար մանէթ կը վաստկի. հարցուր հայնակ կիտի՛ն:

Յահա ասի՛մ. հանա, վարի փանջիծնի մատամը ու խօնա-
խի սմաթոթիթելը, էրկուսն ալ էփպէյի հախ կառնուն մեր քա-
ղաքէն. նացամէն ո՛ր մէկը հայնակ կիտէ: Ամա արի բայէ որ
քաղարիս մէջը մէկ ուրուշ հէքիմ կայ, տա եալ էփպէ
յի պառաւ է. աս հէքիմին իրեն դէնիաթը աղէկ եա դէշ կիտ-
ցածը չիտիմ, ամա տեղով կիտիմ, որ հայնակ աղէկ կիտէ (աս
մարթը ճէպը տպմա պատուած թուխպ ու մերամ ալ աղ-
տոտ քառանթաշ կը քայցունէ ու մերամ խուճուռ խօսք
եա առակ լսից իսէ, համան կը կրէ, ու մէկ օր միտք

ունի տպելու.— ապուրին եփին, խալովուի պատին). շինտը ես կը հարցունու՝ ձեզի աս հայնակ կիտողոյ հէքիմը մէկալ հայնակ չիկիտցող հէքիմին խարէր ստակ կառնէ: Հէջ թահմին չիմ անիլ ինչո՞ւ. անոր համար որ հայնակ կիտէ, տայմա հայնակ կալաճի կանէ ու հայ ըլալովը չէ քի ամընչնալ՝ կը պարծընայ պիլէ: Զունքի հայնակ կիտնալը, հային ժամին հաւա տարիմ ժողովուրդը ըլալը, կասին, պէթէր՝ քէտէր է խելքը միաբը ըսպ ըլալուն: Մեր տեղը մէքամ թիլքիի բունութքով եալըճի ունինք, որ աս պանըս կիտնալով հէջ հայնակ կալաճի ունինք, որ աս պանըս կիտնալով հէջ նայնակ կալաճի չի աւնիլ ու չի կրիլ, տայմա եալ հային վրան կը խընտայ. աս պանը շտէ նարա մէջ խելք ու կիտուլին ճանցիլ է հալթը «եալճի վար, եալճի վեր» պէթէր պատիւ կուտայ ու մեծ ալ հախ կապիլ է:

Հեղինակի միւս երգերը տեղական բարբառով գորուած բոլորն էլ մի մի բանաստեղծական գոհարներ են և քանի աւելի շատ ժամանակ անցնի՝ այնքան կը մեծանայ Պատկանեանի այս տեսակ երկերի նշանակութիւնը, որովհետեւ կալարգուի, որ այս երկերը բոլորովին մասնաւոր նշանակութիւն չունին, այլ հեղինակի անխնայ ծաղրի ենթակալ երևոյթները մեր քաղաքական և հասարակական կեանքի ընդհանուր պայմանների արդիւնք են, որ նրա հերոսները իրանց ալլանդակ վարքով ու կեանքով նոյնպիսի տիպեր են և ոչ անցողական նշանակութիւն ունեցող մասնաւոր մարդկանց կենսագրութիւններ: Մի ուրիշ ժամանակ մենք կվերադառնանք Պատկանեանի բոլոր գրուածներին և յուսով ենք տալ մեր ընթերցողներին մի աւելի մանրամասն տեսութիւն մեր բանաստեղծի ստեղծագործութեան:

Գ.Ա.Բ. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ

«ՆՐԸՐԸՑԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ ՀՍՅԱՏԱՆԻ ՄԱՍԻՆ»

Վեննայի Հանդիսի 1903 տարուայ համարներում Բ. Խալաթեանը հրատարակել է այս վերնագրով թարգմանական յօդուածներ: Տարուայ սկզբի համարներում Հայաստանի և